

ԳԱԳԻՆՅԱՆ Ա. Ռ.

Թեև ինֆինիտիվը որոշ քերականություններում համարվում է բայի ելակետային, բառարանային ձևը, սակայն այն այդպիսին լինել չի կարող, քանի որ ծագումնաբանորեն բայի դիմավոր ձևերը միշտ էլ նախորդել են ինֆինիտիվին:

Անգամ որոշ լեզուներում, ինչպես օրինակ՝ արաբերենում, վրացերենում, ինֆինիտիվն իսպառ բացակայում է: Այս լեզուներում նրան փոխարինում է գործողության անունը, այլ կերպ՝ մասդարը: Եթե հին վրացերենում առկա է և՛ մասդարը, և՛ ինֆինիտիվը¹, ապա ժամանակակից վրացերենում պահպանվում է միայն մասդարը²: Վերջինս ժամանակակից վրացերենում ունի որոշ քերականական կարգեր՝ կերպ, երբեմն նաև սեռ: Իսկ ինֆինիտիվ է համարվում հին վրացերենում ուղղության հոլովով դրված մասդարը, որը խնդրառում է ուղիղ և անուղղակի խնդիր³:

Արաբերենում գործողության անունն իր նշանակությամբ նույն գործողության կամ վիճակի վերացական անունն է առանց դիմավոր ձևերին հատուկ կարգերի՝ դեմքի, ժամանակի և այլն: Բովանդակությամբ այն մոտ է ինֆինիտիվին, իսկ ձևով և կիրառությամբ անուն է, քանի որ ստանում է անորոշ և որոշյալ հոդ, հոլովվում է, կարող է լինել բառակապակցության անդամ, ունենալ ստացական-դերանվանական վերջածանցներ: Միննույն ժամանակ գործողության անունը խնդիր է՝ դրված հայցական հոլովով, կամ նախդրավոր խընդիր, օրինակ՝ hubbu-r-rağuli-l- uatana կամ hubbu-r-rağuli-liluatani «մարդու սերը դեպի հայրենիքը», hubbun գործողության անունը նույնպես խնդրառում է հայցական հոլովով դրված խնդիր՝ uatana, կամ նախդրի միջոցով՝ liluatani⁴:

Մյուս կողմից՝ գործողության անունը, ինչպես և բայը, կարող է ունենալ գործողության ենթակա կամ գործողության խնդիր: Սակայն եթե բայի դեպքում ենթակայի կամ խնդրի նշանակությունը արտահայտվում է ածանցի տեսքով կամ ուղղական (ենթակայի համար) և հայցական հոլովով (խնդրի համար) դրված անուններով, ապա գործողության անվան դեպքում և՛ ենթական, և՛ խնդիրը դրվում են սեռական հոլովով կամ արտահայտվում են ստացական դերանվանական վերջածանցներով, այլ կերպ՝ բայական կարգն արտահայտվում է անվանական կարգի միջոցով, օր.՝ սեռական խնդրով

¹ Чхубианишвили Д. З. К вопросу об инфинитиве в древнегрузинском языке, Тбилиси, 1972 (на груз. яз.), с. 141.

² Языкознание. Большой энциклопедический словарь, М., 1998, с.120.

³ Чхубианишвили Д. З., նշվ. աշխ.:

⁴ Гранде Б. М. Введение в сравнительное изучение семитских языков, М., 1972, с. 187.

(genitivus obiectivus)՝ *hubbu-l-uaṭanani* «սերը դեպի հայրենիքը», սեռական ենթակայով (genitivus subjectivus)՝ *maḡi'ū-r-rafiqi* «ընկերոջ այցը»⁵:

Ինֆինիտիվը թեև ձևի տեսանկյունից մոտ է բայանվանը և ունակ է ստանալու հոլովական վերջավորություններ, սակայն ի տարբերություն նրա, չի կարող ունենալ լիակատար հոլովական հարացույց, որպես կանոն պահպանում է բայի խնդրառությունը և օժտված է քերականական կարգերով: Այն լեզուներում, որտեղ հոլովական համակարգը բացակայում է կամ խիստ կրճատված է, ինֆինիտիվի և բայանվան սահմանազատումը շատ դժվար է (օրինակ՝ անգլերենի *-ing* վերջավորությամբ ձևերի բարդ կարգավիճակը):

Ինֆինիտիվի ուսումնասիրությունը տարբեր լեզուներում թույլ է տալիս որոշակի պատկերացում կազմել նրա զարգացման մասին:

Ինֆինիտիվի ծագումը և զարգացումը սերտորեն առնչվում են լեզվի ծագման և զարգացման հետ. դրսևորվում են որոշակի ընդհանուր օրինաչափություններ՝ ոչ անմիջականորեն արտահայտելով կեցության օբյեկտիվ իրական ձևերի մասին եղած կոնկրետ տարածականի և վերացականի պատկերացումների բարդ փոխհարաբերությունը⁶:

Ըստ Գաբինսկու՝ ինֆինիտիվը լայն տարածում ունի այն լեզուներում, որտեղ չկան նրա գոյականացված տարբերակը (անգլերեն, գեգերեն, սլավոնական լեզուներ), և նրա նախդրավոր տարբերակները կամ ընդհանրապես գոյություն չունեն (ռուսերեն) կամ էլ չնչին քանակությամբ են առկա (անգլերեն)⁷:

Որպես կանոն՝ ինֆինիտիվը հակադրության ներսում հանդես է գալիս որպես ոչ նշուխավորված անդամ այն դեպքում, երբ առկա է նույնաենթակայություն, այլ կերպ՝ դիմավոր բայի ենթական և ինֆինիտիվի քողարկված ենթական նույնն են, ինչպես եղանակավորիչ բայերի դեպքում, կամ երբ ինֆինիտիվի քողարկված ենթական համընկնում է դիմավոր բայի խնդրի հետ, օրինակ՝ պատճառական բայերի դեպքում: Սա կարելի է մեկնաբանել լեզվի տնտեսման տեսանկյունից, քանի որ միևնույն իմաստը արտահայտվում է ավելի սուղ միջոցներով: Այն, որ ինֆինիտիվը նվազագույն սեղմ կառույց է և գերադասելի է լեզվական տնտեսման առումով, հաստատել են նաև ներդրվածվաբանները: Այսպես, ըստ նրանց՝ ինֆինիտիվը դիմավոր բայի փոխարեն գործածում են այն հիվանդները, որոնք խոսքային խանգարումներ ունեն: Ներդրվածվաբանները եկել են այն եզրակացության, որ ինֆինիտիվը բայի առկայացումն է, որը տարբերվում է սովորական բայահիմքից (հիարկե, կան խոսքային խանգարումներ, որոնց դեպքում գործածվում են բայահիմքերը), քանի որ դրանք բայի նվազագույն դրսևորումն են: Այն բայի ամենապարզ և հեշտ դրսևորումն է: Ի տարբերություն դիմավոր

⁵ Гранде Б. М., *նշվ. աշխ.*, էջ 187-188:

⁶ Тупикова Н. А. Формирование категории инперсональности русского глагола, Волгоград, 1998, с. 57.

⁷ Габинский М. А. Появление и утрата первичного албанского инфинитива, Л., 1970, с. 233.

բայի, որի դեպքում նույաես կա առկայացում, ինֆինիտիվը չեզոք է դիմավոր բայի ժամանակի և եղանակի նկատմամբ:

Այսպիսով, աֆազիայի պատճառով առաջացած ապաքերականությունը արդյունք է փոխհատուցող ջանքերի: Դրանք հնարավոր են նաև այն դեպքում, երբ Բրոկայի կենտրոնի խանգարումների կամ այլ աֆազիայի դեպքում ի հայտ եկած աշխատանքային հիշողության ժամանակային գերբեռնվածության պատճառով այլևս անհնար է ավելի բարդ և ամբողջական կառույցներ կազմել: Բացի դրանից՝ երեխաների կողմից լեզվի յուրացման երեքից բազմաթիվ բառերի փուլում նույնպես նկատվում է ինֆինիտիվի գործածության գերակշռություն՝ կապված նվազագույն կառույցի գործածության մարտավարության հետ⁸:

Ինֆինիտիվի քերականացման ճանապարհը բարդ է և կախված է մի շարք հանգամանքներից: Տարբեր լեզուներում ինֆինիտիվի քննությունը ցույց է տալիս, որ դրա զարգացումը սերտորեն կապված է նաև նրա կառուցվածքի հետ, այլ կերպ՝ այն հիմքերի հետ, որոնց նա հանգում է: Եթե այն հանգում է այնպիսի հիմքի, որն ունի վիճակի իմաստ, ապա օժտված է միջին սեռի իմաստով: Դրա մասին են վկայում օրինակ ռուսերենի և հնդիրանական լեզուների տվյալները: Սա առաջին հերթին վերաբերում է այնպիսի վիճահարույց կառույցի, ինչպիսին է ռուսերենի *Земля пахать*. կառույցը, որտեղ ինֆինիտիվի խնդիրը դրված է ուղղական հոլովով: Ինֆինիտիվի միջին սեռի իմաստը առկա է նաև այնպիսի կառույցներում, ինչպիսիք են ինֆինիտիվի հետ ուղղական հոլովով դրված իզական սեռի գոյականների գործածությունը ուղիղ խնդրի պաշտոնում, որը հատուկ է հին ռուսերենի հյուսիսարևմտյան տարածքների գրական հուշարձաններին: Մոսկովյան հուշարձաններում այն գործածվել է մինչև XVIII դարի սկիզբը⁹. իզական սեռի ուղղական հոլով + ինֆինիտիվ՝ *Да к тем делом дияку рука своя приложити*¹⁰.

Ինչ վերաբերում է հնդիրանական լեզուներին, ապա դեռևս Բենվենիստը խոսում է հնդիրանական *-dhiāi*-ով միջին սեռի ինֆինիտիվի մասին: Նա հիմնականում ելնում է ձևաբանական տվյալներից և հատկապես այն փաստից, որ այդ ինֆինիտիվի դիմավոր ձևերը ունեն բացառապես միջին սեռի հարացույց: Սակայն դրան զուգահեռ կան նաև *-dhyai*-ով ինֆինիտիվներ, որոնք ունեն ինչպես ներգործական, այնպես էլ միջին սեռի խոնարհում, որոնք Բենվենիստը փորձում է բացատրել բանասիրական կամ իմաստաբանական փաստարկումներով¹¹:

⁸ **Schecker Michael, Kohls Gregor.** Der Infinitiv als default-Form bei aphasischem Agrammatismus. Der Infinitiv im Deutschen, Hsg. Jean-François Mariller; **Claire Rozier**, Eurogermanistik, Europaeische Studien zur deutschen Sprache, 22, Tübingen, 2005, S. 1-8.

⁹ **Иванов В. В.** Историческая грамматика русского языка, М., 1964, с. 429-430.

¹⁰ **Булаховский Л. А.** Исторический комментарий к русскому литературному языку, Киев, 1950, с. 292, 293-294. Ср. **Габинский М. А.**, указ. соч., с. 188.

¹¹ **Benveniste E.** Les infinitifs avestiques, Paris, 1935, p. 75, 85, 86, 88: **Ζιζιւն. Gippert J.**, Ein indo-iranischer Infinitiv des Mediopassivs?. Münchener Studien zur Sprachwissenschaft 43 (1984), München, 1984, S. 25- 26.

Գիպերտը, սակայն, փորձում է ապացուցել, որ Ռիզվեդայում հաճախ – *dhyai*-ով ինֆինիտիվները ստորոգական կառույցներում ակտիվ իմաստ են արտահայտում: Ինչ վերաբերում է Ավեստայի լեզվին, ապա այստեղ նույնպես կան –*diiāi*-ով ինֆինիտիվներ, որոնցից մի քանիսը միջին սեռի դիմավոր ձևեր չունեն: Ուշագրավն այն է, որ, այնուամենայնիվ, այդ ձևերը կրավորական սեռով կարող են մեկնաբանվել¹²: Ստորոգական կառույցներում –*diiāi*-ով ինֆինիտիվները անցողական բայերի հետ արտահայտում են կրավորականի իմաստ (պացիենսը ուղղականում), իսկ անանցողական բայերի հետ՝ ակտիվ իմաստ (ագենսը ուղղականում): Ընդ որում, ինչպես իրավացիորեն նկատում է Գիպերտը, անցողականի և անանցողականի հակադրությունը ինֆինիտիվ կառույցներում հատուկ է հնդեվրոպական լեզուներին: –*dhyai*-ով ինֆինիտիվների ակտիվ ձևերը վեդայական լեզվում նա համարում է նորակազմություն, որ հիմնված է անանցողական բայերի օրինակով համահարթման վրա: Այսինքն՝ անանցողական բայերի գործող անձը նախապես հանդես է եկել որպես ենթակա, որն էլ տարածվել է անցողական բայերի վրա, իսկ պացիենսը հայտնվել է խնդրի գործառնություն¹³:

Կարծում ենք, որ Բենվենիստի և Գիպերտի կարծիքները չեն հակասում միմյանց, այլ լրացնում են, քանի որ միջին սեռը ծագումնաբանորեն կապված է անանցողականի հետ:

Ըստ Կրասուխինի՝ ռուսերենի, սանսկրիտի, լիտվաներենի այն ինֆինիտիվները, որոնք տրական հոլովին են հանգում և՛ ցույց են տալիս նպատակ, ունեն վիճակի և՛ եղանակային իմաստ, և՛ մոտ են միջին սեռին: Ընդ որում, այստեղ իր դերն է խաղում նաև այսպես կոչված օկսիտոն (կամ ածանցի վրա ընկնող) շեշտը: Ըստ նրա՝ ակտիվ իմաստ ունեն միայն այն ինֆինիտիվները, որոնք հանգում են ներգոյական հոլովին, արտահայտում են ռեալ իրականության իմաստ, և շեշտն ընկնում է արմատի վրա¹⁴:

Նրա տեսությունը չի հակասում նաև հայերենի տվյալներին, քանի որ հայերենի ինֆինիտիվը նույնպես, հանգելով տրականին, կարող է ունենալ և՛ նպատակի, և՛ անհրաժեշտության իմաստ, որն էլ սերտորեն կապված է միջին սեռի իմաստի հետ, օր.՝

Գիրքը կարդալու է:

Այստեղ աշխատանք կա անելու:

Նույնը տեսնում ենք գերմաներենի պատմական զարգացման մեջ: Այսպես, *zi*-ով ինֆինիտիվը՝ դրված տրական հոլովով, *sein* և *haben* բայերի հետ արտահայտում է նպատակի և անհրաժեշտության իմաստներ, ընդ որում, եթե *sein*-ի հետ այն արտահայտում է կրավորական իմաստ, ապա *haben*-ի հետ՝ ներգործական իմաստ:

Das Buch ist zu lesen. Ich habe ein Buch zu lesen.

¹² Gippert J., նշվ. աշխ., էջ 26-36:

¹³ Gippert J., նշվ. աշխ., էջ 38-39:

¹⁴ Красухин К. Г. Аспекты индоевропейской реконструкции. Акцентология. Морфология. Синтаксис, М., 2004, с. 309-310.

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ինֆինիտիվի քերականացման համար խիստ կարևոր է, թե որ հիմքից է այն սերում: Եթե սերում է ներկայի հիմքից, ապա այն ի սկզբանե չունի անհրաժեշտության միջին սեռի իմաստ, սակայն դրվելով տրական հոլովով՝ ձեռք է բերում այդ իմաստը:

Ինչ վերաբերում է ինֆինիտիվի զարգացման ողջ ընթացքին, ապա լեզվաբանության պատմությանը հայտնի են նաև այդ զարգացման ուղին որոշելու փորձեր: Այսպես, Յ. Գիպերտը ինֆինիտիվի կազմությունների համար հնդեվրոպական լեզուներում ենթադրում է հետևյալ հաջորդականությամբ շրջանաձև զարգացում՝ անվանական > կիսանվանական > բայական՝ բայականի և անվանականի միջև ավելացնելով նաև դիմավոր, ինչպես նոր հունարենում է առկա, և *pernominal*, ինչպես թուրքերենում, տիպերը¹⁵:

Եթե դիմավոր տիպը բնորոշվում է երկրորդական նախադասություններով, հարացուցային ամբողջականությամբ օժտված գործողության անուններով և սեռական հոլովով դրված կրող անձով, ապա *pernominal* տիպը՝ ամբողջական հարացույցով օժտված բայանուններով (ինչպես նաև բայածականներով) և սեռական հոլովով դրված կրող անձով, ինչպես օրինակ՝ հին իռլանդերենում¹⁶:

Սակայն նա սրանով չի սպառում ինֆինիտիվի տեսակները և տարբերակում է նաև այսպես կոչված խառը տիպերը, որոնք առկա են ժամանակակից արևմտաեվրոպական լեզուներում, և որոնք վերոհիշյալ հաջորդականությանը հակառակ միտումներ են ցուցաբերում¹⁷:

Դ. Դիստերհեֆթը, քննության առնելով ինֆինիտիվի շարահյուսությունը հնդեվրոպական երեք խմբերում՝ հնդիրանական (ռիգվեդա և Ավեստա), կելտական (հին իռլանդերեն) և խեթալուվական (խեթերեն), ինֆինիտիվին վերագրում է ավելի հին ծագում՝ տանելով այն դեպի նախահնդեվրոպական շրջան և այդ շրջանում նրան բնորոշելով երեք գործառնությունով՝ հրամայականի, նպատակի պարագայի, բայի լրացման¹⁸: Հրամայական ինֆինիտիվը նա համարում է հրամայական եղանակի անվանական համապատասխան ձևը, որը, ինչպես և հրամայական եղանակը, անվանում է միայն գործողությունը՝ առանց հարաբերակցվելու ժամանակի, դեմքի և թվի հետ¹⁹:

Անվանական ծագում վերագրելով նրան՝ Դիստերհեֆթը որոշ ինֆինիտիվների համար ենթադրում է շրջանաձև զարգացում՝ անուն > ինֆինիտիվ > անուն, ինչպես դասական հունարենում՝ չեզոք սեռի որոշյալ

¹⁵ Gippert J. Zur Syntax der infinitivischen Bildungen in den indogermanischen Sprachen (Europäische Hochschulschriften, 21/3), Frankfurt a/M, Bern, Las Vegas, Lang 1978. Doktor-Dissertation, 1977, S. 281.

¹⁶ Նույն տեղում, էջ 317:

¹⁷ Նույն տեղում, էջ 281:

¹⁸ Disterheft D. The syntactic development of the infinitive in indo-european, Columbus, Ohio, 1980, p. 191.

¹⁹ Նույն տեղում, էջ 192:

հոլով ինֆինիտիվը՝ *tò paideúein* «կրթություն (բառացի՝ որոշյալ հոդ + կրթել)»: Լատիներենում, որտեղ չկա որոշյալ հոդ, այն հանդես է գալիս ենթակայի դիրքում՝ *errāre hūmānum est*: Միջնադարյան լատիներենում ինֆինիտիվը հոլովվում է՝ *licerem* (հայցական)²⁰:

Շարահյուսական փոփոխությունների աստիճանական բնույթը Դիստերիեֆթը տեսնում է նշված լեզուներում վերացական բայանունից ինֆինիտիվի անցման տարբերությունների մեջ: Խեթերենը, որպես խնդրո առարկա լեզուներից ամենահինը, ամենահեռուն է նախահնդեվրոպականից, որը հեղինակին թույլ է տալիս ենթադրել, որ ինֆինիտիվն այստեղ բայական համակարգի մաս է կազմում: Ի հակադրություն դրա՝ հին իռլանդերենը ամենամոտն է նախահնդեվրոպական համակարգին, թեև ամենաուշն է ավանդվել (VIII դ.)²¹: Այստեղ կարելի է ենթադրել, որ ինֆինիտիվը պարզապես դեռ լիովին չի քերականացվել հին իռլանդերենում: Սա էլ համահունչ է Շտեմպելի դասակարգմանը, որի համաձայն ինֆինիտիվի կազմությունը և զարգացումը հնդեվրոպական լեզուներում հետևյալն է՝

1) վերացական բայանուններ՝ կազմված տարբեր վերջածանցներից (հին իռլանդերեն, որը դեռ իսկական ինֆինիտիվ չունի)։

2) այս վերացական բայանունները տարբեր թեք հոլովաձևերում հեռանում են անվանական ձևերից և արդեն մոտենում են բայական համակարգին, օրինակ՝ վեդայական ինֆինիտիվը և որոշ առումով նաև հին վրացերենը: Երկուսի դեպքում էլ կարելի է տեսնել անվանականից բայական խնդրառության անցումը։

3) երկրորդ տիպի տարբեր ձևերից մի քանիսը, ինչպես օրինակ՝ իսթերերենում, կամ միայն մեկը, ինչպես դասական սանսկրիտում, ընդհանրացվել են և լիովին մուտք գործել բայական համակարգ, այնպես որ առաջանում է ինֆինիտիվ՝ որպես “inflectional category”, ինչպես Կուրիլովիչն է նկատում: Այստեղ կարևորագույն դեր ունեն տրական (նպատակի իմաստ արտահայտելու համար) կամ հայցական հոլովով (որպես ուղղության հոլով, ինչպես, օրինակ, շարժման բայերի մոտ) դրված բայանունները։

4) ինֆինիտիվ կազմությունները տարբերում են սեռային և ժամանակային ձևերը: Բացի դրանից՝ ինֆինիտիվը կարող է երկրորդաբար զարգացնել անվանական հարացույց, հոլովվել և դարձյալ ստանձնել վերացական գոյականի՝ որպես իր ելակետային ձևի գործառույթը (հունարեն, լատիներեն)²²:

Ինչ վերաբերում է ինֆինիտիվի իմաստային զագացմանը և քերականացմանը, ապա դրա որոշման փորձ է արել գերմանացի լեզվաբան Մ. Հասպելմաթը: Քննելով ինֆինիտիվի արտահայտությունները տարբեր լեզուներում և գալով այն եզրակացության, որ հնդեվրոպականում

²⁰ Նույն տեղում, էջ 198:

²¹ Նույն տեղում, էջ 196-197:

²² Stempel R. Die infiniten Verbalformen des Armenischen, Frankfurt am Main, Bern, New-York, 1983, S. 54.

ինֆինիտիվը բայանուն է՝ տրական, հայցական կամ ներգոյական հոլովներում, նա եզրակացնում է, որ դրանք հենց այն հոլովներն են, որոնք հին հնդեվրոպականում ծառայել են ուղղություն, նպատակ արտահայտելու համար: Խոսելով ինֆինիտիվի զարգացման և իմաստային ընդհանրացման (*semantic generalization*) մասին՝ նա նպատակային իմաստը բխեցնում է հետևյալ որոշակի իմաստներից՝ նպաստական (*benefactive*), մոտեցման (*allative*) և պատճառական (*causal*): Նպատակային իմաստն էլ իր հերթին վերածվել է անիրական ուղղորդիչ իմաստի, սա էլ իր հերթին՝ անիրական ներունակի, վերջինս էլ՝ իրական ոչ փաստականի և վերջապես իրական փաստականի: Այս զարգացումը նա ներկայացնում է հետևյալ գծագրի միջոցով՝

նպաստական



մոտեցման / →

նպատակային → անիրական ուղղորդիչ → - անիրական ներունակ → իրական ոչ փաստական → իրական փաստական²³

պատճառական



Դա նաև ցույց է տալիս քերականացման գործընթացը բնորոշող հետագա ընդհանուր հատկանիշների թիվը՝

1. Զարգացումը բազմակողմանի է: Տարբերականացում գոյություն չունի:

2. Որոշ ժամանակ անց քերականացված տարրերն ամրապնդվում են կամ վերականգնվում, օր.՝ գերմ. առաջին ամրապնդումը եղել է *zi/zu* նշույթավորմամբ, հաջորդը՝ սոմ-ով: Սոմ-ին սպասում է նույն զարգացումը, ինչ *zu*-ին: Ինֆինիտիվի բնույթը ավելի հեշտ է հասկանալ, երբ հաշվի առնվի նրա նախնական նպատակի գործառույթը²⁴:

Կարծում ենք, սա էլ համահունչ է Գաբրիելսկու այն դիտարկմանը, որ բոլոր լեզուներն էլ ձգտում են ինֆինիտիվի առավել ձևայնացման՝ գերմ. *Zu*, անգլ. *to*, հուն. *((((* մասնիկներով և այլն²⁵:

Ի մի բերելով վերը նշված տեսությունները՝ կարող ենք եզրակացնել, որ ինֆինիտիվի տիպաբանական զարգացումը տեղի է ունենում հետևյալ փուլերով՝

Առաջին փուլ. Ինֆինիտիվը որպես ինքնուրույն բառույթ գոյություն չունի, այլ հանդես է գալիս որպես բառաձև՝ դրված այս կամ այն հոլովով: Այստեղ ինֆինիտիվը գործածվում է այնպիսի ստորոգական կառույցների հետ, որոնք ենթադրում են հաջորդող որևէ թեք հոլովով դրված գոյական: Բնաստային

²³ Haspelmath M. From Purposive to Infinitive — a Universal Path of Grammaticization. *Folia Linguistica Historica* 10.1-2, 1989, S. 298.

²⁴ Haspelmath M., նշվ. աշխ., էջ 302-303:

²⁵ Габинский М. А., նշվ. աշխ., էջ 222:

տեսանկյունից դրանք արտահայտում են որոշակի իմաստ (պատճառական, մոտեցման, նպատակի) և որպես կանոն՝ պահպանում են խնդրատությունը:

Երկրորդ փուլ. Բնֆինիտիվը սկսում է գործածվել որպես ինքնուրույն շարահյուսական միավոր, հոլովական իմաստի մթագնում: Այն գործածվում է այնպիսի ստորոգական կառույցների հետ վերացական բովանդակություն արտահայտելու համար, ինչպիսիք են, օրինակ, եղանակավորիչ բայերը: Կարծում ենք, որ այս փուլին պետք է վերագրել նաև հրամայական ինֆինիտիվը և դրանից ծագած պատմական ինֆինիտիվը, քանի որ դրանք ընդհանուր առմամբ նշում են գործողությունը՝ հանդես գալով որպես դիմավոր բայ:

Երրորդ փուլ. Բնֆինիտիվը ներթափանցում է բայական համակարգ՝ ստանալով նաև այլ քերականական կարգեր, ինչպիսիք են ժամանակի և սեռի քերականական կարգերը, որոնցով օժտված են հին հունարենի և լատիներենի ինֆինիտիվները:

Չորրորդ փուլ. Բնֆինիտիվը դադարում է լինել որպես այդպիսին: Նրա փոխարեն հանդես է գալիս կա՛մ դիմավոր բայը, կա՛մ այն խոնարհվում է դիմավոր բայի նման:

Հինգերորդ փուլ. Բնֆինիտիվը գոյականացվում է և լիովին մուտք գործելով անվանական համակարգ՝ ձեռք է բերում առկայացման, երբեմն նաև սեռի քերականական կարգեր:

Ի դեպ, չորրորդ և հինգերորդ փուլերը ոչ թե հաջորդում են միմյանց, այլ ինֆինիտիվի զարգացման տարբեր ուղիներն են: Երբեմն դրանք, իհարկե, միաժամանակ են ի հայտ գալիս, ինչպես, օրինակ, պորտուգալերենի դիմավոր ինֆինիտիվի դեպքում:

Հայտնի է, որ ինֆինիտիվը ոչ բոլոր լեզուներում է գոյականացվում: Մյուս կողմից՝ ոչ բոլոր լեզուներում են բոլոր ինֆինիտիվները գոյականանում: Եթե հայերենում, գերմաներենում, իսպաներենում և պորտուգալերենում բոլոր ինֆինիտիվները կարող են գոյականացվել, ապա շատ լեզուներ (ներառյալ՝ ժամանակակից ֆրանսերենը) կորցրել են այդ հատկությունը²⁶:

ТИПОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА И РАЗВИТИЕ ИНФИНИТИВА

ГАГИНЯН А. Р.

Резюме

Хотя и с точки зрения формы инфинитив близок к именным формам глагола и может получать падежные окончания, но в отличие от глаголов он не может иметь полноценную парадигму. Как правило, он сохраняет управление глагола и имеет грамматические категории. Существует ряд теорий

²⁶ Հմմտ. Сравнительно-сопоставительная грамматика романских языков. Проблема структурной общности, М., 1972, с. 356.

относительно типологического развития инфинитива, обобщая которые можно заключить, что типологическое развитие инфинитива предполагает следующие этапы: инфинитив не существует в качестве самостоятельной лексемы, выступая в качестве словоформы в том или ином падеже. Здесь инфинитив употребляется с такими конструкциями сказуемого, которые предполагают последующее существительное в косвенном падеже. С семантической точки зрения они выражают какое-либо конкретное значение (причины подхода, цели); инфинитив употребляется как самостоятельная синтаксическая единица, затемнив падежное значение. Он употребляется с такими предикативными конструкциями для выражения абстрактного значения, каковыми являются, например, модальные глаголы. На наш взгляд, к этому этапу следует отнести также повелительный инфинитив и восходящий к нему исторический инфинитив, поскольку они в целом обозначают действие, являясь личным глаголом повествования; инфинитив внедряется в глагольную систему, получая и другие грамматические категории, такие, как категории времени и залога, которые также характерны для инфинитивов греческого и латинского языков; инфинитив перестает быть таковым, он может быть заменен либо личным глаголом, либо спрягаться как личный глагол.